

կը կարօտէին, փափաքեցաւ որ անկորուստ յիշատակ մնայ այդ շոր Գրադարանը, զուգելով իր անունը ան-
մոռաց կերպով հետ, ինչպէս որ ի կենդանութեան միշտ
սիրով և յարգանքով վերաբերուած էր հանդէպ անոր:
Վանքիս Թանգարանը զանազան ճղկական և ընտանե-
կան յիշատակներով ճոխացաւ վերջին չորս տարիներուս
մէջ, և Արթին Պէյ կը խորհէր իր հանգստեան օթեանն
ընտրել խաղաղ կղզեկիս նոճիներուն ներքեւ, իր
սիրած Միխիթարեան Հայրերէն անանջատ ապրելու
փափաքով: Կա զեռ աչքերը չփակած՝ իր ամուսնոյն կը
կտակէր այս իր իղձը՝ Ա. Վազարու մէջ թաղուելու:
Ա՛հ չքով կատարուեցաւ մարմնոյն փոխադրութիւնը և
յուզորեկաւորութեան հանգչեւ. և ի մասնաւորի հարկ
կը համարէնք յիշատակել Մ. Թ. Վարժարանի աշա-
կերտներուն խոմքը իրենց պսակով, նոյն օր զրկելով

հանգուցեալ Պէյին տիկնոջ սոյն հետապրը Վարժարանի
Տեսչութեան կողմանէ: Խորապէս յազուած շիրմին առիւ-
ն. Վ. Յ. Արթին Պէյ՝ մեր Բարեբրոնքի, Ձեր առժա-
նաւոր փեսային, կը մտանայեցինք, Տիկին, Ձեր ցաւերուն,
խնդրելով աստուածային միխրառարինքեր Ծ:

Յովսէփ Արթին Պէյ ընդունած էր զանազան ազգե-
րու ջըմաշաններ՝ զորս մահուրէն ամիս մ'առաջ ուզեց
նուէր զրկել մեր Թանգարանին, խորհրդական էր Ադե-
սանդրիոյ իստոն դատարանի վերաքննիչ Ատեանին: Ան-
շաւ Ադեմանդրիոյ փոխանորդարանի վարչական խոր-
հրդոյ, ինչպէս նաև անշաւ Անճատական կանոնադրաց
մասնաժողովին:

Հ. Ք. ԶԲԱՐԱՆ

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Ռազմ. 1923, էջ 61)

Խ.

Սուլթան Ահմետ Գ. ի Թագաւորութեան վերջին օրերն են, զորս Հ. Միքայէլ
վարդապետ կը յիշատակէ իր նամակին մէջ: Հոն՝ ուր պատմութիւնը կ'աւանդէ՝ թէ
Ծովապետին՝ այս է Քափիտան փաշայի մարմինը Հորհոր չէջմէսիի առջև կը նետեն,
մեր Նամակագիրը կը յաւելու, թէ «Քափուտան փաշայի մայրը 30 քսակ էտ (բառ-
նալով հոնկից) քաղեաց գիւրն»:

Ահմետ Գ. ի կը յաւըրդէ Սուլթան Մահմուտ Ա.:

Գերայրգեցեալ Արքայ Հօրդ մերոյ

Տեսան տեսան Միխիթարայ Աստուածաբանուրեան վարդապետի

.... մեծ զազանս այս հանդերձ ամենայն նախարարօքն և զօրօք անցաւ իսկիւտար
վասն գնալոյ ի պատերազմ յարեւել. և աւելի քան զերկու ամիս մնացին անդ ինքեանք և
օրտուն իւրեանց. այսօր վաղն ասելով գնանք, և յաւուր միում, իբրու 20 կամ 30 էնկի-
չերիք զուրալք բարձրացուցեալ ի Ստամպուլ՝ զընաւ շուկայս փակել ետուն, և ի մէջ երկուց
երկց աւուրց իբրու 100,000 եղեն. նաև ի յանատօլէն թափեցան, սասանուիմ և զողուիմ
պաշարեաց զամենեկին. թագաւորն, մատենին քէյնան, զայմաքան, որ է քափիտան փաշան
կալելով փախեան, գիշերով եկին մօին ի սարայն, և ի միւսում աւուր թագաւորն գե-
րեսեան ևս խնիթեաց և ետ յարտաքս բռնաւորաց. զմարմինսն կտարատեցին հայհոյեցին
և քանի մի օր թողին ի հրապարակս. զմարմինսն մատանոյն շուքը կերին: Քափուտան փա-
շայի մայրն 30 քսակ էտ և թաղեաց գիւրն, զթագաւորն ինչուցին, և եղին ի տեղի գեղ-

բօրորգին Մահմուտ անուն, և զայլս մեծամեծս՝ զորս կալան, զորս ոչ գտին, զտունն կողոպտեցին: Եւ քրիստոնէից ֆրաս շատ տուին:... Հրեշտակն վէնէցիւն ի 27 սեպտեմբերի հմուտ կալերով աստ մերձ յերեկոյին, և առաւտն մերձ ճաշուն՝ սկսաւ ապստամբու թիւնն գազանաց:...

Գերարբիւթեան քում ծառայ
Հայր Միքայէլ վ.

1730 Հոկտեմբերի 13
[Կ. Պոլիս]

ԽԱ.

Ահա Ստեփանոս Ռոշըայի մէկ ուրիշ թուղթը՝ որ գլխաւորապէս կը ներկայացնէ ա. ֆր սրբազրած Մաշտոցին առ ի փորձ գործադրութեան լուրը. ր. նոր տոմարը հաստատելու հարցն ու ջանքերը. գ. սոյն երկուքին տպագրութեանց առաջարկներն առ Միւիթար:

Սակայն Միսարանի այդ փոփոխութիւնները տարբեր աչքով կը դիտուին Մինաս վ. Պարոնեանէ առ Միւիթար գրուած նամակի մը մէջ, ուր կ'ըսէ. «Լուայ թէ տէր «Ստեփանն լեհացին եկեալ ի Դրանսիլվանիայ բազում ինչ փոփոխութիւն եկեղեցական «(որպէս է՝ սովորութիւնն Հայոց վարդապետաց) եղեալ իցէ, մինչ զի և չուտին «մսոյ ի շարաթի՝ ի ներքոյ բանադրանաց հրամայեալ իցէ, և այլն, ժողովելով «զղրամս չուհաց ի օթեանս իւր: Իսկ ասի թէ Հ. Մանուէլն ամենայնիւ լռեալ իցէ»:

Ստուգել նշանակութեանէ զուրկ չէ վերջնոյս այդ լռութիւնը. մանաւանդ թէ թագուն նպատակ մը կ'երեւի այն հարցման մէջ՝ զոր ինքն իսկ Հ. Մանուէլ խուպարեան առ Միւիթար կ'ուղղէ ըսելով. «Խնդրեմ թէ լեհացի տէր Ստեփանին խնդրեալն «զորս խնդրէր զինչ պատասխանեցիր նմա զբով վասն տօմարին և տօնացոյցին և «այլոց, ծանուցես ինձ»:

Ռոշըայի թուղթին մէջ մասնաւորապէս դիտելի կէտ մ'է՝ ընտիր հրատարակութիւններ ձեռք բերելու դիտմամբ իր տածած յարգանքն ու համարուող հանդէպ խաչատուր վ. ի և Միւիթարայ լուսամիտ տեսութեանց և հատկութեանց, Բայց այդ ամէնը մի միայն ձեռնարկներ ու դիմումներ են՝ անոնց պաշտօնական հաստատութիւն մը տալու և ընդունելի դարձնելու մտքով: Եւ ճիշտ ասոր համար է՝ որ նամակս նոր փաստաթուղթ մը կ'երեւի մեզ, քանի որ ցարդ Եղիսաբեթուպոլսոյ դիւանական գրութեանց համաձայն՝ նկատուած էր թէ «նոր տոմար մտցնելու համար առաջին քայլերն եղած են 1757ին քաղաքային ժողովոյն մէջ»:

Ամենապատիւ Հայր ի փրիստոս և Տէր վարդապետ

Ձեզմամաստակ գիրք Ապրիլի Ա ծրեցեալն առի ի Լիբսիայէ, զոր էպիֆանովցի Հայն այդի բերեալն էր. (զայլ բաց ի սմանէ ոչ ընկալայ): Առի, ասեմ, մեծաւ խանդադատութեամբ սրտիս, բայց մեծագոյն շնորհակալութեամբ Ամենապատուոյդ, որ այդ-

1. Թուղթ առ Միւիթար. գր. յամին 1730 օգոստ 18, ի վիէննա.
2. Թուղթ առ Միւիթար. գր. յամին 1730 նոյեմբ. 19 ի Պաշուլուֆ.
3. Գովրդիկան, «Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ» էջ 291.

քան հոգածութեամբ ոչ մոռնալով զծառայ իւր, փոստն առ մեզ ոչ է ստոյգ, սակս ընդ Դրանսիականիս առ ձեռն Պատ. Հօրն Մանուէլի հասուցանելով, որպէս և ես այժմիկ առնեմ: Միայն թէ ի վննայ չիցէ որ թղթաբացող, որպէս յոյժ կասկածեմ գումեմնէ: Առ ձեռն ուրեմն նորին Հօր Մանուէլի (զոր ինքն յետոյ ընդ վաճառականաց հասուցէ Գերանձնութեանդ) առաքեմ զՄաշտոց մեր սրբազրեալ և տրամադրեալ, և իշխանութեամբ Գեր. Տեառն Ալփեպս.ին մերոյ առփորձեալ, որով մեք ի Լեհաստան և ի Դրանսիականի վարիմք: Առ պարոն Պետրոսն Քլեանն բուն բարեկամն իմ գրեմ, զի որպէս ինձ՝ մինչ անդէն էի՝ բերանով խոստացաւ զծախս սորին տպելոյն հոգալ՝ նոյնպէս զործով կատարեցէ, որպէս զի ի ձեռն Գեր. Հայրութեանդ ըստ գովելի երկասիրութեանդ՝ որով ի նմանիս պայծառանաս՝ ի հրապարականն եկեցէ լոյս: Ընդ սմին յգեմ և զնոր սոմարն տօնացոյցին ի միասին կարգաւորեալ, ոչ զնորայն օրինակն, զոր Սուրբ Ժողովոյն յառաջ ընդ տէր Յօսիանին ի տիպ տալ յանձնեցի վասն Ծառագատկին Հայոց, այլ՝ զայլ, որ ինքն զինքն՝ թէ զինչ իցէ՝ ցուցանէ: Զտօմարէս, զայցարարութեան իմոյ, որ ի Դրանսիականիս, համարն տալով սուրբ Ժողովոյն մանրամասնաբար ծանուցի, և յորովիք մաղթեցի գառփործումն նորին և զթոյլ, զի այդր ի վէնէտիկ ծախիք Մեծաւորնի Դատաւորացն կեռլացող՝ որպէս ինձ խոստացան՝ տպեցի: Չնոյնն արարի և առ Գեր. Տէր Դեռնցիոսն վննայուս կրիմալտին, որ Եպս.ին Դրանսիականիոյ (յորմէ առեալ էր զգիր վասն Տօմարին ընդ իմոցս) ուրախութեամբ խոստացաւ հոգալ զսորին հաստատումն ի Ս. Ժողովոյն. և այժմ՝ առաւել ևս կարող է՝ զոյով կարտինայ: Բայց ընդ վախճանիլ Սրբազան Հայրապետին¹, կարտինալացն գոյով զբազմօք զբաղեալք, տակաւին ոչ ետուն զպատասխան վերայդրեալ Եպս.ին կամ ինձ: Ասացի ի վէնէտիկ, որպէս զի հոգաբարձութեամբ և վկայութեամբ Ամենապատիւ Տ. Խաչատրոյ վարդապետին և Գերանձնութեանդ՝ թարց տարակուսութեան և սխալութեան տպեցի: Ունի զսիւղ ինչ նոյն Տէր վարդապետն ի վերայ Սրբոց ոմանց, որք in Martyrologio Romano ոչ գտանին, բայց Գեր. Ալփեպիսկոպոսն մեր և այլք՝ թողումք ի բարեհաճութիւն կամաց ձերոց, զի եթէ գուման ի Տօնացոյցէս յայտմանէ հանել, և զայլս, որպէս զԽախահարսն կրօնաւորաց, զՍուրբ Տօմինկոս, զՅրանցիսկոս, և զայլս, որպէս փոխանակ հանելոցն ղնել, պահելով զկարգն և զխրատն, ձեզ թուեցի, մեք սիրով ընդունելոց եմք: Միայն թէ այս հարկաւոր զիրքս հաստատեցի, և այսքան ժամանակաց անկարգութիւն եկեղեցւոյս մերոյ ի բաց բարձր, և նախատիք մեր վերացին հանդերձ անիծիք Ժողովոցն մերոց Ստոյ և Ատանայ: Գեր. Ալփեպս.ն մեր խնդրէ, զի Մաշտոցն ի մեծագոյն թերթի վասն դիւրութեան ընթերցողաց տպեցի: Զբառարանն իմ Ատտուծոյ ձեռնտուութեամբ յուսամ ի նորապայ ամին չուրջ զՈւրխիւն աւարտել, զորմէ յայլում առթի յետոյ զեկուցից: Եւ յանձնեալ զիս մաքուր աղօթիցդ, զաջդ Գերապատիւ Հայրութեանդ շնորհաւորակապէս համբուրեմ:

Ի Ստանիսլաւով, 6 դեկտ. 1730

Ամենախուստ և Պարտ. Ժառայ
Ստեփ. Ստեփանեան վարդապետ
և Օֆիցեալ Ստանիսլաւովու

(Շարունակելի)

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ



Լ. Բենեդկտով (1724-1730).